ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25 մարտի 2019 թվականի թիվ 76-Ա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով՝

կարգադրում եմ.

1. Իջևան համայնքի ղեկավարի կողմից հողերի օգտագործման և պահպանման գործառույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝
   Խմբի ղեկավար՝

   Միսակ Մելքումյան-քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

   անդամներ՝

   Գագիկ Մելիքբեկյան-իրավաբանական բաժնի վարիչ
   Աղաբեկ Գալստյան-ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄ ՏՍԳՀ բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
   Ասքանազ Բաբլումյան-ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ
   Համլետ Փիրումյան-հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասն.
2. Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրել Իջևան համայնքի ղեկավարի կողմից հողերի հրապարակային սակարկությունների կազմակերպման ընդհանուր ընթացակարգային պայմանների պահպանումը՝ հայտարարությունների հրապարակումից մինչև արձանագրությունների կազմումը:
   Պարզել՝ հողերի հրապարակային սակարկությունները վերջնական արդյունքում որքան եկամուտ են ապահովում համայնքի համար և որքանով են դրանք ծառայում համայնքի զարգացմանը:

Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ կազմել արձանագրություն և ներկայացնել մարզպետին:

3. Ուսումնասիրությունն ավարտել մեկամսյա ժամկետում:

Մարզպետ՝ Հ.Զոբանյան

X _____